

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԻՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

### Գ. Մ. ՋԵՌՅԱՆ

Հայրենական մեծ պատերազմը ամբողջովին նոր խնդիրներ դրեց պետական, կուսակցական, արհմիութենական կազմակերպությունների առջև: Ֆաշիստական Գերմանիայի հզոր ռազմական մեքենայի դեմ հաղթանակ տանելու համար անհրաժեշտ էր լարել խորհրդային ժողովրդի բոլոր ուժերը՝ ռազմական, տնտեսական, մարդկային բոլոր ռեսուրսները: Սպասվում էր երկարատև ու ծանր պատերազմ, որի համար անհրաժեշտ էր ունենալ ամուր կազմակերպված երկաթյա թիկունք:

Թիկունքի ամրապնդման համար հսկայական աշխատանք տարան խորհրդային արհմիությունները: Այդ գործում իրենց արժանի ներդրումն ունեն Սորհրդային Հայաստանի արհմիությունները, որոնց բազմակողմանի գործունեությունը պատերազմի տարիներին դեռևս զգում է մանրակրկիտ և հետևողական լուսաբանման կարիք:

Պետք է նշել, որ Սորհրդային Հայաստանի արհմիությունները պատերազմի սկսման տարածում կազմակերպչորեն զգալի թուլացած էին: Ռբա պատճառն այն էր, որ պատերազմին նախորդած տալիսյան անձի պաշտամունքի տարիներին արհմիութենական շատ ղեկավար գործիչներ ու ակտիվիստներ կուսակցական և խորհրդային բազմաթիվ աշխատողների հետ մեկտեղ ենթարկվել էին անհիմն ռեպրեսիաների ու հալածանքների: Զգալիորեն սահմանափակվել էր արհմիութենական կազմակերպությունների գործունեության ոլորտը, նվազեցվել նրանց իրավունքները: Բացի այդ, 1937 թ. ապրիլ-մայիսին կայացած ՀԱՄԿՍ-ի 6-րդ պլենումի որոշմամբ վերացվեցին արհմիությունների հանրապետական խորհուրդները, որոնց հետ միասին նաև ՀԱՄՍ-ը:

1941 թ. վերջերին և 1942 թ. սկզբներին, ինչպես ամբողջ Միության մեջ, այնպես էլ Հայաստանում, հաշվի առնելով քաղաքացիական պատերազմի փորձը և տեղեղված պատերազմական ծանր իրավիճակը, ՊՊԿ-ն և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը 1942—45 թթ. մի շառք որոշումներ են ընդունում, թիկունքի ամրապնդման աշխատանքներում արհմիությունների մասնակցությունն ապահովելու, նրանց գործունեության ոլորտն ընդլայնելու և ուժերն ու միջոցները ֆաշիզմի դեմ մղվող համաժողովրդական պայքարում ներդնելու մասին: Արհմիութենական կազմակերպությունները դառնում են թիկունքում տարվող մասսայական աշխատանքների ակտիվ մասնակիցներն ու կազմակերպիչները: Սորհրդային Հայաստանում արհմիությունների դերը պատերազմի տարիներին զգալիորեն մեծացավ: Սա առանձնապես կապված էր այն բանի հետ, որ հանրապետության կոմունիստների մոտ 58 %-ը գորակոչվեց բանակ, իսկ պատերազմի առաջին մեկ ու կես տարում կուսակցական կազմակերպությունների թիվը կրճատվեց 543-ով, որից 333-ը գործում էին անմիջապես արտադրական ձեռնարկություններում<sup>1</sup>: Շատ տեղերում արհմիութենական կազմակերպությունների աշխատանքը վճռորոշող նշանակություն էր ունենում ռազմատնտեսական հարցերի լուծման ժամանակ:

Արդյունաբերության և տրանսպորտի ձեռնարկություններում հանրապետության արհմիությունների գործունեությունը նպատակադրված էր ռազմաճակատի պատվերի անլքերի կատարմանը, սոցիալիստական մրցության կազմակերպմանը, արտադրության մեջ ներօտավճած նոր բանվորական կադրերի ուսուցմանը, աշխատանքային կարգապահության ամրապնդմանը: 1942—43 թթ. ռազմական պատվերների կատարման համար ակտիվ աշխատանք տարան տեղական արդյունաբերության բանվորների, քաղաքային ձեռնարկությունների աշխատողների, էլեկտրակայանների և էլեկտրաարդյունաբերության աշխատողների, կապի, ավտոմոբիլային տրանսպորտի և խճուղային ծանապարհների աշխատողների, հացարդյունաբերության բանվոր-

<sup>1</sup> Տե՛ս В. А. Мурадян. Компартия Армении в годы Великой Отечественной войны. Ереван, 1984, էջ 72:

ների արհմիությունների հանրապետական կոմիտեները, ինչպես նաև հանրապետության քիմիական և ծանր արդյունաբերության ձեռնարկությունների արհմիութենական ֆաբրիկա-գործարանային կոմիտեները: Նրանք ջանքերով 1942—43 թթ. հանրապետության գրեթե բոլոր արդյունաբերական ձեռնարկությունների կոլեկտիվները ընդգրկվեցին սոցիալիստական մրցության մեջ<sup>2</sup>: Մրցության նպատակը ռազմական պատվերների անթերի կատարումն էր: Մրցության արդյունքները ծյուղային արհմիությունների հանրապետական կոմիտեների հետ համատեղ ամփոփում էր հանրապետության ժողովրդատրոիդը: Էլեկտրափայայանների և էլեկտրաարդյունաբերության բանվորների հանրապետական կոմիտեն, նրա տեղական կազմակերպությունները 1943—45 թթ. կարողացան էլեկտրաէներգիայի խնայողության համար արդյունաբերական ձեռնարկությունների միջև լայն սոցիալիստական մրցություն ծավալել: 1944—45 թթ. էլեկտրաէներգիայի խնայողության համար սոցիալիստական մրցության մեջ ընդգրկված էին հանրապետության 44 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ<sup>3</sup>: Արհմիության հանրապետական կոմիտեի սվայներով 1943 թ. էլեկտրափայայանների 1417 աշխատողներից ստախանովականներ էին 431-ը, հարվածայիններ 107-ը, իսկ 1944 թ.՝ 2048 աշխատողներից համապատասխանաբար 431-ը և 107-ը<sup>4</sup>:

Կապի աշխատողների, ավտոմոբիլային տրանսպորտի և խճուղային ճանապարհների արհմիության տեղական կազմակերպությունները կարողացան 1944 թ. ընթացքում 1150 աշխատողներից սոցմրցության մեջ ընդգրկել 579-ին, որոնցից ստախանովականներ էին 202-ը, հարվածայիններ 137-ը<sup>5</sup>: 1943 թ. Միության տեղկոմներն ու շրջկոմները հրավիրել են 71 արտադրական խորհրդակցություն, որտեղ արված 165 առաջարկություններից իրականացվել է 125-ը, իսկ 1944 թ. 73 արտադրական խորհրդակցություններում արված 170 առաջարկություններից իրականացվել է 140-ը<sup>6</sup>:

1942 թ. փետրվարի 17-ին քաղաքային և գործարանային արտադրական խորհրդակցություններ հրավիրելու, բնակչության ու կարմիր բանակին մատակարարվող մթերքների պետական առաջադրանքների կատարման մասին որոշում ընդունեց ՀԽՍՀ հացարդյունաբերության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահությունը<sup>7</sup>: 1942 թ. Միության 683 աշխատողներից մոտ 664-ը ընդգրկված էին սոցիալիստական մրցության մեջ, որոնցից 214-ը ստախանովականներ էին, 227-ը հարվածայիններ, 10-ը երկհարյուրականներ, 12-ը բազմահատոցայիններ<sup>8</sup>: 1943 թ. հանրապետության հացարդյունաբերության ձեռնարկությունները կարմիր բանակին և բնակչությանը մատակարարվող մթերքների արտադրության պլանը կատարեցին 100,9 %-ով և երկրի տվեցին 113 հազար ռուբլու լրացուցիչ արտադրանք, անտեսելով մոտ 357,7 տ ալյուր<sup>9</sup>: Պատերազմի տարիներին զգալիորեն բարձրացավ հատկապես ծանր, թեթև և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների արհմիութենական, ֆաբրիկագործարանային կոմիտեների դերը: Երևանի Ստալինյան (այժմ Լենինյան) շրջանի գործարանային արհմիութենական կազմակերպությունները, որտեղ գտնվում են հանրապետության ամենախոշոր արդյունաբերական ձեռնարկությունները, կարողացան կազմակերպել 1943 թ. 125 ճակատային բրիգադ՝ 2000-ից ավելի ստախանովական բանվորների մասնակցությամբ, որոնք աշխատում էին ամենածանր տեղամասերում<sup>10</sup>: 1943 թ. օգոստոսին Լենինականի քաղաքային, ֆաբրիկագործարանային և արտադրամասային արհմիութենական կազմակերպությունների կոմիտեների անդամների խորհրդակցությունն իր ընդունած որոշման մեջ խստիվ պարտավորեցրեց քաղաքի բոլոր արհմիութենական կազմակերպություններին մոբիլիզացնել աշխատավորական կոլեկտիվների ուժերը ռազմական պատվերներն անթերի կատարելու համար<sup>11</sup>: Առավել կազմակերպված ու արդյունավետ էին գործում տեքստիլ կոմբինատի, մեխանիկական գործարանի, կարի ֆաբրիկայի արհմիութենական կազմակերպությունները, որոնց կատարած դրական աշխատանքը բազմիցս անգամ Նշվում է ՀԿ(Բ)Կ Լենինականի քաղկոմի բյուրոներում և պլենումներում<sup>12</sup>: Ռազմական պատվերների կատարման գործում ակտիվ մասնակցություն ունեցան նաև Ղափանի պղնձի կոմբինատի, Կիրովականի քիմիական կոմբինատի

<sup>2</sup> ՀԽՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 16, գ. 50, թ. 1:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 789, թ. 8:

<sup>4</sup> Նույն տեղում, ֆ. 699, ց. 1, գ. 1, թ. 4:

<sup>5</sup> Նույն տեղում, ֆ. 770, ց. 1, գ. 19, թ. 9:

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Նույն տեղում, ֆ. 374, ց. 1, գ. 18, թ. 2:

<sup>8</sup> Նույն տեղում, գ. 60, 39:

<sup>9</sup> Նույն տեղում, գ. 64, գ. 5:

<sup>10</sup> ԱԼԻ հավակական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 32, ց. 10, գ. 67, թ. 95:

<sup>11</sup> Նույն տեղում, ֆ. 46, ց. 5, գ. 232ա, թ. 15:

<sup>12</sup> Նույն տեղում, ֆ. 181, թ. 13, գ. 189, թ. 76, գ. 107, գ. 278, թ. 113, գ. 341, գ. 93:

և Ալավերդու պղնձաձուլական գործարանի արհմիութենական կազմակերպությունները: Նրանք իրենց սեփական ուժերով կազմակերպում էին նաև արտադրության մեջ ներգրավված նոր բանվորական կադրերի ուսուցումը: Պատերազմի տարիներին ՀՆՍՀ գյուղատնտեսության աշխատողները միավորված էին երեք խոշոր արհմիութենական կազմակերպություններում, որոնք էին՝ ՄՏԿ ու հողօրգանների, այգե-խաղողագործական սովխոզների ու այլազան արդյունաբերության և էլևատորների բանվորների ու ծառայողների արհմիութենական կազմակերպությունները: 1942 թ.-ից այս միությունների հանրապետական կոմիտեները գործարար սոցիալիստական մրցություն կազմակերպեցին ռազմական պատվերների կատարման համար: 1943 թ. մայիսի 28—29-ը Երևանում կայացավ ՄՏԿ և հողօրգանների արհմիության առաջին հանրապետական կոնֆերանսը, որն ամփոփեց պատերազմի ժամանակաշրջանում կատարած աշխատանքները: Կոնֆերանսը նշեց, որ արհմիության հանրապետական կոմիտեն, նրա տեղական կազմակերպությունները հսկայական օգնություն են ցույց տալիս հողօժողկոմատին պարենամթերքների մատակարարման ռազմական պատվերները կատարելու գործում<sup>13</sup>: Հաշվի առնելով այս հողօժողկոմատի կոլեգիան 1942 թ. հունիսին ստեղծեց հատուկ հանձնաժողով՝ արհմիութենական կազմակերպությունների փորձը ընդհանրացնելու և նրանց գործունեության շրջանակները ընդլայնելու համար<sup>14</sup>:

Համանման գործունեություն էին ծավալել նաև այգե-խաղողագործական սովխոզների ու էլևատորների և այլազան արդյունաբերության բանվորների արհմիությունները, որոնց գործուն մասնակցությամբ այգեգործական սովխոզների, գինու և պահածոների գործարանների, մթերումների ժողկոմատի ձեռնարկությունները կարողացան զգալիորեն բարելավել իրենց աշխատանքները<sup>15</sup>: Հանրապետության գյուղատնտեսության աշխատողների արհմիութենական կազմակերպությունների արտադրական գործունեությունը մեծ նշանակություն ուներ, որովհետև գերմանական զորքերի կողմից 1942 թ. ամռանը և աշնանը Հյուսիսային Կովկասը գրավելուց հետո անդրկովկասյան հանրապետությունները ստիպված էին ոչ միայն սեփական միջոցներով բավարարել աշխատավորների պարենային պահանջները, այլև պարենամթերք մատակարարել Կովկասի մատուցներում մարտնչող կարմիր բանակի զորամասերին: Այդ էր պատճառը, որ ՀԿ(բ)Կ Կենտկոմը, 1943 թ. ապրիլին, հունիսին և նոյեմբերին քննարկելով ՄՏԿ և հողօրգանների այգե-խաղողագործական սովխոզների և էլևատորների ու այլազան արդյունաբերության աշխատողների արհմիությունների հանրապետական կոնֆերանսների անցկացման մասին հարցերը, հանձնարարեց հանրապետության կուսակցական կազմակերպություններին տեղերում անհետաձգելի միջոցառումներ անցկացնել արհմիությունների կազմակերպական-քաղաքական ամրապնդման ուղղությամբ<sup>16</sup>:

1941—43 թթ. Հայաստանի արհմիությունները պետական և տնտեսական օրգաններին հսկայական օգնություն ցույց տվեցին աշխատավորների նյութական և կենցաղային պահանջների բավարարման գործում: Այստեղ նրանց հիմնական խնդիրը պարենամթերքների լրացուցիչ արտադրության կազմակերպումն էր՝ բանվորներին ու ծառայողներին ընդգրկելով մատակարան և կոլեկտիվ բանջարաբուծության աշխատանքներում: 1942 թ. ապրիլ-մայիս ամիսներին ՀԿ(բ)Կ Կենտկոմը երեք անգամ քննարկեց անհատական և կոլեկտիվ բանջարանոցների կազմակերպման հարցերը, նպատակահարմար գտնելով ակտիվացնել արհմիությունների գործունեությունն այս ուղղությամբ<sup>17</sup>: Այդ մասին որոշումներ ընդունեցին Երևանի և Լենինականի քաղկոմները, Կիրովականի, Ալավերդու, Ռաֆանի շրջկոմները: Պետք է նշել, որ այս ուղղությամբ հանրապետության արհմիությունները զգալի գործ կատարեցին, օրինակ՝ ֆինբանկային աշխատողների արհմիությունը 1944 թ. տվալներով բանջարանոցներ էր կազմակերպել 144 հեկտարի վրա, այգե-խաղողագործական սովխոզների արհմիությունը՝ 287,8 հեկտարի, դպրոցների աշխատողների արհմիությունը՝ 677 հեկտարի, քաղլուս աշխատողների արհմիությունը՝ 152 հեկտարի, ՄՏԿ և հողօրգանների արհմիությունը՝ 531 հեկտարի վրա<sup>18</sup>: Արհմիութենական կազմակերպությունների ուսերին էր դրված նաև զինծառայողների ընտա-

<sup>13</sup> ՀՆՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 494, ց. 1, գ. 33, թթ. 1—4:

<sup>14</sup> Նույն տեղում, գ. 22, թ. 36:

<sup>15</sup> Նույն տեղում, ֆ. 346, ց. 1, գ. 115, թ. 5, ֆ. 492, ց. 1, գ. 15, թթ. 4, 8, 12, 10, 14:

<sup>16</sup> ՍԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 23, գ. 30, թ. 33, գ. 32, թ. 34, գ. 37, թ. 112:

<sup>17</sup> Նույն տեղում, ֆ. 1, ց. 22, գ. 25, թ. 11, գ. 28, թթ. 12, 126, գ. 30, թթ. 100—101:

<sup>18</sup> ՀՆՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ ֆ. 552, ց. 1, գ. 12, թթ. 18—19, ֆ. 346, ց. 1, գ. 133, թ. 33, ֆ. 733, ց. 1, գ. 64, թ. 97, ֆ. 494, ց. 1, գ. 42, թ. 9 և ՍԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 003, գ. 42, գ. 95:

նիքներին և պատերազմի հաշմանդամներին օգնություն ցույց տալու գործի կազմակերպման հիմնական ծանրությունը:

Հանրապետության արհմիությունների քաղաքական-մասսայական և կուլտուր-լուսավորչական գործունեությունը նպատակաուղղված էր աշխատավորությանը հայրենասիրական ոգով դաստիարակելուն: Ունենալով որոշակի նյութական միջոցներ և հնարավորություններ, արհմիությունական կոմիտեները կուլտ-մասսայական աշխատանքների հիմնական կազմակերպիչներն էին: Արվեստի աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեն («Գեղաշխ») պատերազմի ողջ ընթացքում արդյունավետ գործունեություն էր ծավալել ռազմա-շեֆական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Միության հանրապետական կոմիտեին կից ստեղծվել էր հանրապետական ռազմաշեֆական կոմիտե, իսկ տեղական կազմակերպություններին կից՝ հանձնաժողովներ:

Ռազմա-շեֆական կոմիտեի նախաձեռնությամբ 1943 թ. հանրապետության ստեղծագործական կոլեկտիվները 77 համերգ տվեցին ռազմաճակատի առաջավոր գծում գտնվող զորաստերի համար<sup>19</sup>: Սրանից բացի 1943 թ. ընթացքում Հայաստանի, Կրաստանի, Նախիջևանի ԽՍՀ-ի և Իրակի տարածքներում գտնվող թիկունքային զորամասերի համար համերգներ տեղեցին մոտ 400 բրիգադներ<sup>20</sup>: 1941—43 թթ. հանրապետությունում գտնվող հոսպիտալների վիրավոր և հիվանդ մարտիկների համար «Գեղաշխի» արհմիության ռազմա-շեֆական հանձնաժողովները կազմակերպեցին 1010 համերգ<sup>21</sup>:

1943 թ. նոյեմբերին տեղի ունեցավ ռազմա-շեֆական ակտիվի համաքաղաքային կոնֆերանսը, որին մասնակցում էին «Գեղաշխի» արհմիության ռազմա-շեֆական հանձնաժողովների և բանակի քաղորդանների ներկայացուցիչները: Կոնֆերանսը ընդունեց նոր, լրացուցիչ պարտավորություններ 1944—45 թթ. համար<sup>22</sup>: Կենսագործելով կոնֆերանսի որոշումները՝ արհմիության ռազմա-շեֆական հանձնաժողովները 1944 թ. փետրվարին մեծ հաջողությամբ անցկացրին կարմիր բանակի և ռազմա-ձուլային նավատորմի 26-ամյակին նվիրված կուլտուր-շեֆական սպասարկման միամյակ, որի ժամանակ կազմակերպվեց կարմիրբանակային գեղարվեստական ինքնագործունեության ստուգատես: Հանրապետական ռազմա-շեֆական կոմիտեն առանձին զորամասերի կցել էր կոմպոզիտորների, ռեժիսորների, բալետմեյստրների 10 բրիգադներ, որոնք պարբերաբար պարապմունքներ էին անցկացնում բանակային ինքնագործ խմբերի և անհատ կատարողների հետ<sup>23</sup>: 1944 թ. վերջերի տվյալներով Հայաստանի էվակու-հոսպիտալներում տրվել է 2698 համերգ, իսկ ծանր վիրավորների համար հիվանդասենյակներում կազմակերպվել էր 2041 ելույթ<sup>24</sup>:

1945 թ. մարտին քննարկելով հոսպիտալներում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքների հարցը, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի բյուրոն բարձր գնահատեց արհմիությունների կատարած ռազմա-շեֆական աշխատանքները և առաջարկեց կուսակցության քաղկոմներին ու շրջկոմներին բազմակողմանի օգնություն և աջակցություն ցույց տալ ռազմա-շեֆական հանձնաժողովներին<sup>25</sup>:

Առանձնակի կարևոր էր հանրապետության արհմիությունների գործունեությունը զինվորական հոսպիտալների հիմնան և սպասարկման ուղղությամբ: Դեռևս պատերազմի սկզբին ՀԱՄԿԽ-ն դիմեց Խորհրդային կառավարությանը, խնդրելով թույլատրել արհմիությունական առողջարաններում և հանգստյան տներում գտնվող վիրավոր զինվորների ու սպաների համար կազմակերպել հոսպիտալներ: ԽՍՀՄ Ժողկոմխորհրդի 1941 թ. հուլիսի 17-ի որոշմամբ այդ խնդրանքը բավարարվեց, և արհմիությունները ստեղծեցին հոսպիտալների մեծ ցանց: ՀԱՄԿԽ-ի քարտուղարության օգոստոսի 19-ի որոշմամբ արհմիությունական բոլոր առողջարանները և հանգստյան տները վերածվում են հոսպիտալների, որոնք կառավարման համար ըստ ստեղծվում է ՀԱՄԿԽ-ի հոսպիտալների վարչություն<sup>26</sup>:

Հայաստանի առողջապահության ժողկոմատի պլանը մինչև պատերազմի սկսվելը 10 հոսպիտալ էր՝ 3400 մահճակալներով: Սոբիլիգացիայի հայտարարումից հետո բոլոր հոսպիտալները բացվեցին գերագույն շտաբի Նշած ժամանակամիջոցում<sup>27</sup>: Մինչև 1941 թ. օգոստոսը

<sup>19</sup> Նույն տեղում, ֆ. 67, ց. 3, գ. 21, թ. 6:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում, թ. 7:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 033, գ. 51, թ. 22:

<sup>24</sup> Տճ՝ Մ. Կ. Մինին. Военно-шефская работа профсоюзов в годы Великой Отечественной войны. Канд. дисс., М., 1972, էջ 126, 149:

<sup>25</sup> ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 30, թ. 106:

<sup>26</sup> Советские профсоюзы в годы войны. М., 1970, стр. 16.

<sup>27</sup> ԽՍՀՄ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 9, գ. 22, թ. 226:

հանրապետության հոսպիտալներն ընդարձակվեցին 2895 մահճակալով<sup>28</sup>։ Բացի այս մինչև 1941 թ. նոյեմբերի 1-ը ընդունվել և տեղավորվել է մերձճակատային շրջաններից էվակուացված 4 հոսպիտալ՝ 1000 մահճակալով, որոնք ըստգրկվել են Հայաստանի առողջապահության ժողովմատի հոսպիտալների ցանցում՝ ապահովված անհրաժեշտ գույքով և շենքով<sup>29</sup>։

Հայաստանի արհմիությունները ակտիվորեն մասնակցում էին հոսպիտալների հիմնման աշխատանքներին։ Այսպես, օրինակ, 1942 թ. հունիսի տվյալներով Հայաստանի հոսպիտալներն ունեին 8000 մահճակալ, որից երկուսը 700 մահճակալով հանձնված էր ՀԱՄԿԽ-ի կառավարմանը, իսկ Այսթալայի 150 մահճակալով № 36966 հոսպիտալը հիմնվել էր անմիջականորեն արհմիությունների միջոցներով և ուժերով<sup>30</sup>։

Արհմիությունները տևտեսական մեծ օգնություն էին ցույց տալիս հոսպիտալներին։ Առանձնապես ակտիվ գործունեություն էր ծավալել այս ուղղությամբ ՀԽՍՀ բժշկասանիտարական աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեն, որի նախաձեռնությամբ գրեթե բոլոր բուժօժանիտարական հիմնարկությունները շեֆական կարգով կցված էին հոսպիտալներին, նրանց ցույց էին տալիս ակտիվ բժշկական օգնություն։ Բուժսանմիությունը պատերազմի տարիներին վերցրել էր 37 հիվանդասենյակների շեֆությունը, սպասարկելով 872 հիվանդներին։ Նրանց համար հավաքվել էր 7088 կտոր գիրք, 121472 ռուբլու սննդամթերք, արհմիության միջոցներից տրամադրվել էր 19293 ռուբլի<sup>31</sup>։

Հանրապետության մյուս արհմիութենական կազմակերպությունների խնդիրը հոսպիտալներին պարենամթերքով և գույքով ապահովելն էր։ Գործը կազմակերպվում էր այնպես, որ հոսպիտալներն ունենան ոչ թե մեկ, այլ մի քանի շեֆ կազմակերպություններ, որպեսզի օգնությունը ավելի արդյունավետ ու անխափան լինի։ Այսպես օրինակ, № 2468 հոսպիտալն ուներ երեք շեֆ կազմակերպություն և 14 շեֆարկյալ կոլտնտեսություններ<sup>32</sup>։ № 3694 հոսպիտալը ուներ 19, № 1460-ը՝ 17, № 3693-ը՝ 7 շեֆ կազմակերպություններ<sup>33</sup>։

Ռազմաճակատին ցույց տրվելիք օգնության ուղղությամբ Հայաստանի արհմիությունների գործունեության հիմնական ձևերից մեկն էլ կարմիր բանակի համար բժշկական քույրերի և սանիտարական դրուժինիկների պատրաստումն էր։ 1941 թ. հուլիսի 2-ին ՀԱՄԿԽ-ի քարտուղարությունը որոշում ընդունեց բժշկական քույրերի և սանիտարական դրուժինիկների նախապատրաստման ուղղությամբ արհմիութենական կազմակերպությունների աշխատանքների մասին։ Համանման որոշում ընդունվեց նաև 1943 թ. մայիսի 29-ին<sup>34</sup>։ Պատերազմի տարիներին արհմիությունները առանց արտադրությունից կտրվելու բժշկական դասընթացների և խմբակների լայն ցանցում պատրաստեցին 90 հազար բուժքույր և ավելի քան 160 հազար սանդրուժինիկ<sup>35</sup>։

Այս ուղղությամբ ակտիվ աշխատանք տարան նաև Խորհրդային Հայաստանի արհմիությունները։ 1942—43 թթ. ՄՍԿ և հողորգանների արհմիության հանրապետական կոմիտեն իր միջոցներից դրուժինիկներին ուսման համար հատկացրեց 4903 ռուբլի, իսկ բուժքույրերի համար՝ 7257 ռուբլի<sup>36</sup>։ 1942 թ. արհմիությունը արդեն պատրաստել էր 45 բուժքույր և 49 սանդրուժինիկ<sup>37</sup>։ Այգեխաղողագործական սովխոզների արհմիության հանրապետական կոմիտեն իր միջոցներով կազմակերպել էր սանդրուժինիկների կուրսեր Արարատ տրեստի Ստալինի անվան և կոնսերվորեստի Միկոյանի անվան սովխոզներում, որտեղ բանվորուհիներից պատրաստվեցին 58 դրուժինիկներ։ Այդ նպատակի համար Միությունը ծախսել է 35000 ռուբլի դրամ<sup>38</sup>։ Սննդարդյունաբերության աշխատողների արհմիության հանրապետական կոմիտեի նախագահության 1941 թ. հուլիսի 29-ի նիստի որոշմամբ Երևանում և շրջաններում կազմակերպվեցին բուժքույրերի և սանդրուժինիկների կուրսեր, որտեղ մինչև 1943 թ. հունվարի 1-ը պատրաստվեցին 43 բուժքույր և 85 սանդրուժինիկ<sup>39</sup>։ 1944 թ. տվյալներով սննդարդյունաբերության աշխատողների արհմիությունը պատրաստել էր 96 բուժքույր և 135 սանդրուժինիկ, նախատեսվածից համապատասխանաբար 76-ով և 30-ով ավելի<sup>40</sup>։ Հացարդյունաբերության

<sup>28</sup> Նույն տեղում, թ. 231:

<sup>29</sup> Նույն տեղում, թ. 232:

<sup>30</sup> Նույն տեղում, գ. 14, գ. 18, թ. 14:

<sup>31</sup> Նույն տեղում, թ. 66, գ. 2, գ. 106, թ. 17:

<sup>32</sup> Նույն տեղում, գ. 75, թ. 35:

<sup>33</sup> Նույն տեղում, թ. 36:

<sup>34</sup> Профсоюзам СССР. Документы и материалы, т. 3, стр. 419—420.

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 420:

<sup>36</sup> ՀԽՍՀ ՀՆՍԾ ՊԿԱ, ֆ. 494, գ. 1, գ. 12, թ. 69:

<sup>37</sup> Նույն տեղում, գ. 24, թ. 27:

<sup>38</sup> Նույն տեղում, ֆ. 346, գ. 1, գ. 124, թ. 35:

<sup>39</sup> Նույն տեղում, ֆ. 358, գ. 1, գ. 21, թ. 15:

<sup>40</sup> Նույն տեղում, գ. 28, թ. 11:

բանվորների արհմիությունը 1942—43 թթ. ընկած ժամանակաշրջանում պատրաստել էր 24 սանդրուծինիկ և 17 բուժքույր<sup>41</sup>, քաղյուսաշխատողների արհմիությունը 1941—44 թթ. ընթացքում միության անդամներից պատրաստեց 124 բուժքույր և 298 սանդրուծինիկ<sup>42</sup>: Իրուցույրների և սանդրուծինիկների մեծ մասը՝ ավարտելով ուսումը մեկնում էր ռազմաճակատ կամ աշխատում էր տեղական հասպիտակներում՝ կատարելով իր պարտքը հայրենիքի հանդեպ: Օրինակ, քաղյուսաշխատողների արհմիության պատրաստած 23 բուժքույր 1944 թ. զըտնըվում էին ռազմաճակատում, իսկ 202 սանդրուծինիկներ աշխատում էին հանրապետության հոսպիտալներում<sup>43</sup>:

Այսպիսով, 1941—45 թթ. Հայաստանի արհմիությունները լայն գործունեություն էին ծավալել ինչպես արտադրության մեջ, այնպես էլ աշխատավորության նյութական ու կոլտուրական պահանջմունքների բավարարման և ռազմաճակատին ցույց տրվելիք օգնության ասպարեզներում: Արհմիությունների պատմության ուսումնասիրությունը պատերազմի ժամանակաշրջանում ունի որոշակի պատմագիտական արժեք: Առաջին հերթին հանրապետության արհմիությունների գործունեությունը, որոնք այն ժամանակ միավորում էին մոտ 160 հազար բանվորների և ծառայողների, ցույց է տալիս հայ հասարակության բոլոր դասակարգերի և խավերի նվիրվածությունը հաղթանակի գործին, հայ աշխատավորության խորը ինտերնացիոնալ բնույթը և նրա հավատարմությունը ռուս ժողովրդին ու ԽՍՀՄ եղբայրական ընտանիքի դաշինքին: Սա լուրջ հարված է նաև Հայրենական մեծ պատերազմի պատմության բուրժուական կեղծարարներին, որոնք փորձում են ապացուցել, որ ԽՍՀՄ-ի ազգաբնի փոքրամասնությունները չէին ուզում կռվել գերմանացիների դեմ և ձգտում էին «անկախություն» ստանալ Գերմանիայի օգնությամբ:

**Г. М. КЕРЯН—Профсоюзы Армении в годы Великой Отечественной войны.—** Профсоюзы Советской Армении в годы Великой Отечественной войны провели огромную работу по укреплению тыла и мобилизации сил трудящихся на помощь Красной Армии. Они активно участвовали в перестройке народного хозяйства на военный лад, провели многочисленные мероприятия для оказания помощи военным госпиталям. Профсоюзы помогали советским хозяйственным органам в организации снабжения населения продуктами питания и удовлетворения бытовых и культурных нужд трудящихся.

<sup>41</sup> Նույն տեղում, ֆ. 374, ց. 1, գ. 68, թ. 48:

<sup>42</sup> Նույն տեղում, ֆ. 783, ց. 1, գ. 64, թ. 92:

<sup>43</sup> Նույն տեղում: